



N 22-38
03.06.2022

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Կարեն Անդրեասյանին.

ՀՐԱՏԱՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Անդրեասյան,

ՀՀ ԱՆ ֆրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները (այսուհետ՝ Խումբ) ՀՀ ԱՆ «Նուբարաբեն» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ առանձնազույգ են ունեցել ցմառ ազատագրված դատապարտված դատապարտյալ Արմեն Տեր-Սահակյանի հետ: Խմբի անդամներին վերջինս հայտնել է, որ դեռևս 2022թ. մայիսի 28-ին աջ կողմը թուլացել է, դժվարությամբ է ֆայլում, բացի այդ, աջ ականջը չի լսում, ունենում է գլխապտույտներ, կորցնում է հավասարակշռությունը: Գիշերները սրտխառնոց է ունենում, քրտնում է: Տարել են ականջի հետազոտության, սակայն ցուցել են գլխի համակարգչային տոնոգրաֆիա հետազոտություն: Ինքը կասկածում է, որ ինսուլտ է կրել: Սիմպտոմները ևս դա են վկայում: Դիմել է համապատասխան հետազոտություն անցնելու համար, ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ը ավել է իր թույլտվությունը, սպասում են ֆրեակատարողական ծառայություն թույլտվությանը:

Քանի որ սվյալ դեպքում բուժզննության հապաղումը կարող է առաջացնել ծանր հետևանքներ (անձի առողջության համար անդառնալի հետևանք, կամ կյանքի սպառնալիք), ուստի առաջարկում ենք անհապաղ կազմակերպել Արմեն Տեր-Սահակյանի բուժզննությունը, այդ թվում՝ համակարգչային տոնոգրաֆիայի հետազոտություն:

Հարգանքով՝

Խմբի նախագահ

Զարուհի Հովհաննիսյան